ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀԿԳՄՄՆ <<ԵՐԵՎԱՆԻ Լ.ԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>>ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ

ԱՌԱՐԿԱ՝ Անգլերեն

ԿԱՏԱՐՈՂ՝ -Էլբակյան Լիլիթ

ՂԵԿԱՎԱՐ՝ ՕհաննաԱվետիսյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ <<Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց >> ՊՈԱԿ

Գյումրի 2023

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից հասարկությունում երեխան հանդիսանում է մեծագույն արժեք, և յուրաքանչյուր երեխայի խնամքը և դաստիրակությունը կարևորագույն խնդիր է հանդիսանում այդ հասարակության համար: Ընտանիքը այն բնական սոցիալական միջավայրն է, որտեղ տեղի է ունենում երեխայի առաջնային սոցիալականացումը, դաստիարակությունը, որտեղ երեխան ապահով է և պաշտպանված: Ընտանիքն է ձուլում երեխայի արժեքանորմատիվային համակարգը, անձնային առանձնահատկությունները, վարքային մոդելները, բարոյական սկզբունքները, նպաստում նրա սոցիալական կայացմանն ու անձի ձևավորմանը: Ժամանակակից պայմաններում ընտանիքը՝ որպես երեխայի գլխավոր և բնական պաշտպան, հայտնվել է դժվարին իրավիճակում, շատ ընտանիքներ չեն կարողանում հարմարվել հասարակության մեջ, առկա են տարատեսակ ճգնաժամեր, ինչը հանգեցրել է բացասական հետևանքների, ծնելիության նվազման, յուրաքանչյուր 3-րդ ամուսնության մասնատման, երեխաների սոցիալական որբության և այլն: Այս ամենի հետևանքով բազմաթիվ երեխաներ մնացել են առանց ծնողական խնամքի, շատ երեխաներ դարձել են ծնողազուրկ, օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով պայմանավորված, մեծացել է լքված երեխաների թիվը: Ծնողազուրկ երեխաների կենսագործունեությունը օբյեկտիվորեն խախտվում է և այն բնութագրվում է անորոշ ելքով, որոշակի ոլորտներում հնարավոր անհաջողություններով, որոնք նրանք ի զորու չեն հաղթահարելու ինքնուրույն կամ ընտանիքի օգնությամբ: Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ծնողազուրկ երեխաները ներկայումս առավել խոցելի են և առավել կարիք ունեն ուշադրության, խնամքի և պաշտպանության:

Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող՝ ծնողազուրկ երեխաները հատուկ հոգածության և պաշտպանության իրավունք ունեն պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, կրթադաստիարակչական հաստատությունների կողմից, որոնք պետք է նպաստեն երեխաների լիարժեք կենսագործունեությանը և զարգացմանը, ինչպես նաև հնարավորինս ապահովեն նրանց մասնակցությունը հասարակական կյանքին: Երեխաները բոլոր ժամանակաշրջաններում և հասարակարգերում մշտապես հանդիսացել են հասարակության ամենաանպաշտպան և խոցելի խավը: Երեխաները ցանկացած պետության և հասարակության ապագան են: Եվ կախված նրանից, թե որքանով են պաշտպանված երեխաների իրավունքները, կանխորոշվում է նաև տվյալ պետության և հասարակության ապագան: Եթե երեխայի համար պատասխանատու կամ նրա հետ շփվող մարդիկ և հաստատությունները նրա հանդեպ իրենց պարտականություններին իրականացնելիս բավականաչափ հմուտ և բարեխիղճ չլինեն, ապա նրա շահերը կարող են ոտնահարվել:

Հետևաբար, երեխան մինչև չափահաս դառնալն ապրում է որոշակի ռիսկի պայմաններում: Չունենալով անհրաժեշտ ներուժ իր կարիքները բավարարելու և իրեն պաշտպանելու համար՝ նա ամեն պահ կարող է տուժել մի միջավայրում, որտեղ յուրաքանչյուրը փորձում է բավարարել իր կարիքները: Այս գործում շատ մեծ և անփոխարնելի է դպրոցի դերը, դպրոցում պետք է կարողանան հնրավորինս աջակցել ծնողազուրկ երեխաներին, պետք է օգնեն հաղթահարել խնդիրներ, որոնք ինքնուրույն հաղթահարել չեն կարողացել երեխաները: Որոշ երեխաների խոցելիությունն աճում է ծնողազուրկ լինելու պատճառով, նրանք կարող են ընդգրկված լինել աշխատաշուկայում, ենթարկվել տարբեր չարաշահումների, դառնալ բռնությունների, թրաֆիքինգի և սեռական չարաշահման զոհ և այլն:

Իրենց հասակակիցների համեմատ՝ նման երեխաները լրացուցիչ խնդիրներ ունեն, որոնց լուծումը պահանջում է հատուկ աշխատանքներ, ինչպես նաև հատուկ պաշտպանության տեխնոլոգիաների կիրառում: Դպրոցում պետք է կարողանան բացահայտել այս բնույթի խնդիրները և աշխատեն համագործակցելով տարբեր մարմինների հետ լուծում տալ այս հարցին: Այսպիսով ծնողազուրկ երեխաների աջակցությանն ուղղված աշխատանքները դպրոցում պետք է շարունակական, կարգավորված և համագործակցային լինեն:

ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Երեխաների սոցիալական պաշտպանության համակարգը Հայաստանում այսօր արմատական բարեփոխումների է ենթարկվում: Այս բարեփոխումներինց չէր կարող անմասն մնալ կրթական համակարգը՝ մասնավորապես դպրոցները: Բարեփոխումների ռազմավարությունը ենթադրում է երեխաների խնամքի կազմակերպում նրանց լավագույն շահի հաշվառմամբ: Իսկ դա նշանակում է, որ ամեն ինչ պետք է անել, որպեսզի երեխան խնամվի ընտանիքում, իսկ եթե դա հնարավոր չէ ընտանիքի բացակայության կամ նրա անբարենպաստ լինելու պատճառով, ապա պետք է զարգացնել ընտանիքին առավել չափով նման այլընտրանքային ծառայություններ: Այս համատեքստում կարևոր նշանակություն է ստանում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հետ մանկավարժների, սոցիալական մանկավարժների, սոցիալական աշխատողների աշխատանքը: Այդ աշխատանքները պետք է իրականացվեն և ընտանիքում / որդեգիր, խնամատար/, և դպրոցում, և երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հատուկ հաստատություններում: Այստեղ մասնագետները գործ ունեն ոչ հասուն, զարգացման անձի կայացման գործընթացում գտնվող էակի հետ, որն ի տարբերություն չափահասի, ոչ միշտ կարող է հասկանալ խնդրահարույց իրավիճակը, իսկ եթե նույնիսկ զգում է որոշակի անհանգստություն, ապա հաճախ չի հասկանում դրա պատճառը, չգիտի, թե ում դիմի մասնագիտական օգնության համար: Ի տարբերություն մեծահասակների, երեխան ոչ միշտ կարող է գիտակցել, որ ինքն ունի այս կամ այն խնդիրը, իսկ եթե նույնիսկ անհանգստություն է զգում, ապա շատ հաճախ չի հասկանում դրա պատճառները կամ չի կարողանում այն ձևակերպել: Հետևաբար հաճախ չգիտի ում դիմել մասնագիտական օգնություն ստանալու համար: Հիմնականում դպրոցներում ծնողազուրկ երեխայի հետ իրակաացվող աշխատանքների, էությունը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

1. Խորհրդատվություն, որի նպատակը խորհրդառուի հոգեվիճակի թեթևացումն է: Օրինակ՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ծնողազուրկ երեխան հատկապես կարիք ունի մեկի, որի հետ կարողանար կիսվել, ստանալ տեղեկություններ և իրեն լքված, արհամարված, անկարող, <<անտուն>>, անպաշտպան չզգա, նույնը նաև հաստատությունում հայտնվելով: Կարելի է աշխատանքները միաժամանակ իրականացնել և՛ ծնողներին փոխարինողների և՛ երեխայի հետ:

2. Խնդրի լուծմանն ուղղված հնարավոր գործնական քայլերի իրագործումը՝ որպես կազմակերպիչ, միջնորդ, փաստաբան:

3. Վերահսկում է, այսինքն՝ աշխատելով ծնողազուրկ երեխայի հետ, սոցիալական մանկավարժն ու ուսուցիչները, սոցիալական աշխատողն ու հոգեբանը պարտավոր են հետևել նրան և նրա շրջապատին՝ երեխային վնասելու գործընթացը ժամանակին նախազգուշացնելու և կանխելու նպատակով: Քանի որ իրականացվող աշխատանքների հիմնական նպատակն է ստեղծված իրավիճակում, խնդրահարույց իրադրություններում ծնողազուրկ երեխաներին, նրանց ընտանիքներին, ծնողներին փոխարինողներին օգնության ցուցաբերումն է, ապա բնական է, որ բոլոր մասանգետները պետք է ունենան ընդհանուր գիտելիքներ երեխայի տարիքային առանձնահատկությունների, երեխայի հնարավոր դժվարությունների մասին, տեղյակ լինեն ընտանիքի, դպրոցի, համայնքի ռեսուրսներին, կարողանան ակտիվացնել և ղեկավարել երեխայի պաշտպանությանն ուղղված տարբեր գործընթացները և իրենց գիտելիքների, մասնագիտական փորձի ու հմտությունների միջոցով օգնել երեխային ու նրա ընտանիքին ընտրել ռազմավարություններ, որոնք երաշխավորում են երեխայի խնամքն ու պաշտպանությունը, նրա զարգացումն ու առաջընթացը և ստեղծված իրավիճակների դրական ելքը:
Երեխաները, որոնք վաղ հասակից ապրում են հատուկ հաստատություններում, ունեն մեծերի հետ շփման պակաս: Թվում է, թե այդ պայմաններում երեխաները

պետք է կարողանան առավել ինքուրույն կազմակերպել իրենց կյանքը, վարքը: Սակայն, փորձը ցույց է տալիս, որ դա այդպես չէ: Իրականում ծնողազուրկ երեխայի շփումը մեծերի հետ ընդհանուր խմբով, դաստիարակի կողմից անընդհատ հուշումները, թե ինչ պետք է անի երեխան այս կամ այն պահին, չի բերում երեխայի ինքնուրույն վարքի ձևավորմանը և կազմակերպմանը: Հաշվի առնելով այն, որ հաստատություն գալիս են խնդիր ունեցող երեխաներ, նրանցից յուրաքանչյուրի հետ աշխատանք է տարվում ուղղված տվյալ խնդիրների կարգավորմանը: Հարկավոր է նաև ճիշտ կազմակերպել երեխաների ազատ ժամանցը, որը երեխաների մոտ ձևավորում է այնպիսի անձնային որակներ, ինչպիսին են՝ ընտրողականությունը, նախաձեռնությունը, որոշումներ կայացնելու ինքնուրույնությունն և այլն: Նման խնդիրներ կարող են առաջանալ որդեգիր և խնամատար ընտանիքներում: Ծնողազուրկ Երեխայի դպրոցում գտնվելու ժամանակահատվածում դպրոցի աշխատակիցների ռեսուրսները պետք է ուղղված լինեն երեխայի հոգեբանական վիճակի կարգավորմանը: Ծնողների սերն ու գուրգուրանքը, ընտաանեկան ջերմությունն ու ապահով մթնոլորտը որոշիչ նշանակություն ունեն երեխայի համար, որից շատ դեպքերում զրկված է առանց ծնողական խնամքի մնացած երեխան: Այս բացը որոշ չափով պետք է կարողանա լրացնել դպրոցը՝ մանկավարժների նվիրված, գրագետ և հոգատար աշխատանքի շնորհիվ: Ժամանակին նրանց հանդեպ ցուցաբերված անտարբերությունն ու անուշադրությունը հետագայում ավելի բազմապատիկ ավելի վնասաբեր ուժով հարվածում են հասարակությանը: Մտահոգիչ է նաև այն փաստը, որ վերջին տարիներին ընտանեկան խնամքից զրկվում են ոչ միայն երեխաները, որոնց կենսաբանական ծնողները տարբեր օբյեկտիվ պատճառներով (մահ, ծանր աստիճանի հաշմանդամություն, անհայտ բացակայություն և այլն) չեն կարող իրականացնել իրենց գործառույթները, նաև նրանք ում ծնողները, չկարողանալով հաղթահարել սեփական կյանքի՝ տարաբնույթ գորոծոններով պայմանավորված ճգնաժամերը, հայտարարում են իրենց ծնողական անկարողության, երեխաների խնամքի կազմակերպման ֆիզիկական

անհնարինության մասին՝ ժամանակավորապես հրաժարվելով իրենց պարտականությունների կատարումից կամ պարզապես լքելով երեխաներին՝ անորոշության մեջ թողնելով նրանց կյանքի հետագա ընթացքը: Այս դեպքում, հնարավոր է երեխաները իրենց համարեն անպիտան և ավելորդ բեռ բոլորի համար, նրանց հետ աշխատող մանկավարժները, հոգեբանները, սոցիալական աշխատողները պետք է շատ նրբանկատ լինեն:

Այլ է աշխատանքը ծնողազուրկ երեխայի ընտանիքի հետ այստեղ կարևոր է փոխօգնող փոխհարբերությունների հաստատումը, հնարավոր խնդիրների կանխարգելումը, երեխաների հարմարումը, հարմարման հետ կապված խնդիրների հաղթահարումը, միավորող աշխատանքների իրականացումը, ըստ անհրաժեշտության ընտանեկան թերապիայի իրականացումը: Բոլոր աշխատանքներում պետք է հասկանալ երեխայի ապրումները, վստահել նրան, լինել անկեղծ և ազնիվ: Ծնողազուրկ լինելու փաստը երեխաները շատ դժվար են ընդունում: Հաճախ են լաց լինում, պահանջում են ավելի մեծ ուշադրություն, դառնում են քմահաճ, դանդաղում է զարգացումը, հայտնվում են սթրեսային վիճակում: Դպրոցում մանկավարժական կոլեկտիվը պետք է վարքային այսպիսի դրսևորումների ևս պատրաստ լինի և դրսևորի հանդուրժողական մոտեցում: Թիրախային խումբ են համարվում հատկապես դեռահաս տարիքի երեխաները, քանի որ այս տարիքը համարվում է ամենաճգնաժամային տարիքը: Դեռահասության տարիքը ընդունված է համարել դժվար շրջան, քանի որ այս տարիքում է ձևավորվում մարդու աշխարհընկալման, աշխարհայացքի և առհասարակ առաջնային արժեքների համակարգը: Երեխաները վախենում են, որ իրենք կմնան միայնակ: Նրանք կարող են վախ ապրել: Դեպրեսիայի պատճառով երեխայի մոտ հաճախ առաջանում են ստամոքսի խանգարում, գլխացավ և այլն, այստեղից հետևություն, որ դպրոցում ցանկացած երեխայի հետ աշխատելիս, մասնավորապես, ծնողազուրկ երեխաների, շատ կարևոր է նաև դպրոցի բժշկական աշխատողների դեր, նրանց բանիմաց և հոգատար մոտեցումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով դպրոցը երեխային տալիս է գիտական գիտելիքներ և իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք: Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձը: Ընտանիքում ձևավորվում և մշակվում են մարդկանց կարեկցելու կարողությունը: Անձի ներդաշնակ զարգացման համար այդ երկու որակներն էլ խիստ անհրաժեշտ են: Այս հարցում կրկնակի շատանում է դպրոցի դերը և գործ ունենք ծնողազուրկ երեխաների հետ, դպրոցում կատարվող աշխատանքները կրկնապատկվում են և էլ ավելի պատասխանատու դառնում: Այսպիսով նախ շատ կարևոր է դպրոց-ընտանքի կապի ստեղծումը: Դպրոցի և ընտանիքի կապի ամրապնդման անհրաժեշտությունը ներկայումս առաջնային խնդիր է դարձել, ծնողազուրկ երեխաների հետ կապված շատ խնդիրների լուծման հարցում անփոխարնելի է դպրոցի դերը: Կան հիմնախնդիրներ. որոնք կապված են դասարանում երեխաների դաստիարակության գործընթացի հետ: Երեխայի հետազոտման, նրա լավագույն որակների և հատկությունների բացահայտման ու զարգացման հարցերում դպրոցի և ընտանիքի փոխներգործության շարժառիթն այդ կառույցների ընդհանուր հետաքրքրություններն են: Այդպիսի փոխհարաբերությունների հիմքում միմյանց նկատմամբ վստահության, փոխադարձ հարգանքի, փոխօգնության և օժանդակության, համբերատարության սկզբունքներն են: Դրանք օգնում են ուսուցիչներին և ընտանիքի անդամներին՝ համատեղ ջանքերով երեխայի ինքնորոշման, ինքնակառավարման, խոչընդոտների ու դժվարությունների հաղթահարման համար անհրաժեշտ որակների ու հատկությունների ձևավորման պայմաններ ստեղծել: Ներկայումս այդ համագործակցության ստեղծման և ամրապնդման գործը իր ուսերին են վերցրել նաև սոցիալական մանկավարժը, հոգեբանն ու սոցիալական աշխատողը: Մանկավարժների և ընտանիքի համագործակցությունը նպատակասլաց և երկարատև աշխատանք է, որն ամենից առաջ ենթադրում է ընտանիքի , երեխայի ընտանեկան դաստիարակության պայմանների ու

յուրահատկությունների բազմակողմանի և համակարգված ուսումնասիրություն: Դպրոց-ընտանիք ինստիտուտների համագործակցությունը և փոխներգործությունը մանկավարժական գործընթացի բոլոր փուլերում պետք է կազմակերպվեն պլանավորված ու համակարգված ձևով: Հաշվի առնելով ժամանակակից ընտանիքի հիմնախնդիրների բարդությունը, նրա կառուցվածքի և բնութագրիչների անընդհատ փոփոխականությունը, այժմ անհրաժեշտ է անհատական ախտորոշման ընթացակարգերից տեղափոխել ընտանիքի սոցիալ-մանկավարժական մոնիթորինգ: Սոցիալական մանկավարժը պետք է իմանա.

1) ընտանիքի կազմը.

2) Ընտանիքի արտաքին և ներքին շփումների առանձնահատկությունները

3) Տվյալ ընտանիքի նորմերը, արժեքները, կանոնները,

4) Ընտանիքի անդամների ունակություններ և կարողություններ

5)Նյութական աջակցության մակարդակը, կյանքի կազմակերպման առանձնահատկությունները;

6) Առողջական վիճակ, ապրելակերպ և ընտանիքի անդամների սովորույթներ:

Այսպիսով՝ դպրոցի դերը ցանակծ երեխայի կյանքում անփոխարինելի է, ամենապատասխանատու ու կարևոր միջավայրն է անձի ձևավորման համար, կրկնակի բարդանում են դպրոցում տարվող աշխատանքները, երբ գործ ունենք ծնողազուրկ երեխաների հետ, բայց ճիշտ, հոգատար, բարեխիղճ աշխատանքով միշտ ելքեր գտնվում են բոլոր բարդ իրավիճակներից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Երեխաների իրավունքները և երեխաներին ու ընտանիքներին նպաստող սոցիալական ծառայությունները, ԵԽ հանձնարարական, CM/Rec (2011)2012թ.

2. Հայաստանի Հանրապետության «Ընտանեկան օրենսգիրք»

3. ՀՀ Սահմանադրություն

4. Չախոյան Ա., Գրիգորյան Գ. Չ 166 Սոցիալական իրավունքների շտեմարան/Արթուր Չախոյան, Գոռ Գրիգորյան: ՀՀ դատավորների միություն: Խմբ.՝ Հրաչիկ Սարգսյան, Վահե Ենգիբարյան.- Եր.: Անտարես, 2014թ.

5. Агапов Е.П., Нор-Аревян Семьеведение. – Изд-во: Дашков и Ко, Наука-Спектр, 2010.- 316.

6. Брускова, Е. С. Семья без родителей. - М.: Центр развития социально-педагогических инициатив и SOS -Интернационал, 2006. – С. 111.

7. Брутман В.И.. Проблема социального сиротства и пути ее решения. Дети-сироты: консультирование и диагностика развития. - М., 2003. - С. 121.

8. Волкова Н.В. Приёмная семья как одна из форм устройства детей, оставшихся без